Հաշվետվություն

2019 թվականի սեպտեմբերի 16-ից 19-ը Տաջիկստանի Հանրապետություն (Դուշանբե) կատարած գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը.**
   Սարհատ Պետրոսյան

2. **Զբաղեցրած պաշտոնը.**
   Կադաստրի կոմիտեի ղեկավար

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**
   Տաջիկստանի Հանրապետություն, Դուշանբե, 2019 թվականի սեպտեմբերի 16-ից 19-ը

4. **Հրավիրող կողմը.**
   Տաջիկստանի Հանրապետության հողային կառավարման և գեոդեզիայի պետական կոմիտե

5. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**
   Մասնակցություն ԱՊՀ մասնակից պետությունների գեոդեզիայի, քարտեզագրության, կադաստրի և Երկրի հեռահար զոնդավորման միջպետական խորհրդի 41-րդ նիստին

6. **Քննարկված թեմաները.**
   Քննարկվեցին օրակարգով նախատեսված հետևյալ հարցերը.
   - երկրատարածական տվյալների ենթակառուցվածքի աշխատանքային խմբի գործունեության արդյունքները,
   - կոորդինատների և բարձրությունների աշխատանքային խմբի գործունեության արդյունքները,
   - աշխարհագրական անվանումների աշխատանքային խմբի գործունեության արդյունքները,
   - ԱՊՀ մասնակից պետությունների բազային կազմակերպության՝ Մոսկվայի գեոդեզիայի և քարտեզագրության պետական համալսարանի գործունեության արդյունքները,
   - ԱՊՀ մասնակից պետությունների գեոդեզիայի, քարտեզագրության, կադաստրի, Երկրի հեռահար զոնդավորման բնագավառի մասնագիտական աշխատաշուկայի սերտիֆիկացման և օրինականացման, գեոդեզիայի, քարտեզագրության, երկրատեղեկատվական համակարգերի, կադաստրի և Երկրի հեռահար

զոնդավորման ոլորտում լրացուցիչ մասնագիտական կրթության փաստաթղթերի օրինականացման աշխատանքային խմբի գործունեության արդյունքները,
- երկրատարածական տվյալների կառավարման աշխատանքային խմբի գործունեության արդյունքները,
- գեոդեզիայի, քարտեզագրության, կադաստրի և Երկրի հեռահար զոնդավորման ոլորտում լավագույն փորձի և նորարարությունների փոխանակումը,
- 2020 թվականի համար միջպետական խորհրդի նախագահի ընտրության, 42-րդ նիստի անցկացման ժամկետների և անցկացման վայրը որոշելու մասին հարցերը,
- 41-րդ նիստի ավարտական փաստաթղթերի ընդունումը:

7. Հանդիպումներ, ելույթներ, բարձրացված կամ քննարկված հարցեր.

Հայաստանի Հանրապետության պատվիրակության կազմում էին Կադաստրի կոմիտեի ղեկավար Սարհատ Պետրոսյանը և գեոդեզիայի և քարտեզագրության վարչության պետ Արտակ Փիլոյանը: Կոմիտեի ղեկավարի կողմից ներկայացվեցին վերջին մեկուկես տարվա կտրվածքով Հայաստանի տնտեսական կյանքում մասնավորապես կադաստրի համակարգում սկսված բարեփոխումները: 41-րդ նիստի ընթացքում արձանագրվեցին գեոդեզիայի ոլորտում միասնականացումը և ստանդարտացումը, քննարկվեցին միջպետական խորհրդի անդամ պետություններում կոորդինատների և բարձրությունների գեոդեզիական միասնական համակարգին անցնելու, ինչպես նաև անշարժ գույքի էլեկտրոնային գրանցման համակարգերը զարգացնելու հարցերը:

Նկատի ունենալով խորհրդում նախորդ տարի սկսված բարեփոխումները և համաշխարհային միտումները՝ Հայաստանի Հանրապետության պատվիրակության կողմից առաջարկվեց վերջինիս անվանափոխությունը. «գեոդեզիայի, քարտեզագրության և հեռահար զոնդավորման» փոխարեն օգտագործել «երկրատարածական» եզրույթը:

Հայաստանում անշարժ գույքի գրանցման ոլորտի բարեփոխումների վերաբերյալ քննարկումների արդյունքում Ղազախստանի գործընկերների առաջարկով ստեղծվեց նոր աշխատանքային խումբ, որը կքննարկի և կառաջադրի մասնակից պետություններում անշարժ գույքի գրանցման հայեցակարգի նախագիծը:

Նիստի ընթացքում հստակեցվեցին մինչև 2024 թվականը համատեղ լուծվելիք խնդիրները, քննարկվեց այս ոլորտներում զարգացման ռազմավարության նախագիծը, իսկ համատեղ իրականացված առաջին նախագծերից մեկն աշխարհագրական անվանումների երկրատեղեկատվական ռեսուրսի ստեղծումն է, որը հնարավորություն է տալիս ինտերակտիվ ռեժիմում տեսնելու ԱՊՀ երկրների տարածքներում գտնվող բոլոր օբյեկտների անվանափոխությունը: Մասնագետների որակավորումը բարձրացնելու նպատակով Ռուսաստանի Դաշնության հնագույն բուհերից մեկին՝ Գեոդեզիայի և քարտեզագրության մոսկովյան պետական համալսարանին, առաջարկվեց անցկացնել լրացուցիչ կրթական ծրագրեր և սեմինարներ:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները,

պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Հայկական կողմի և Ռուսաստանի Դաշնության գեոդեզիայի և քարտեզագրության մոսկովյան պետական համալսարանի միջև համաձայնություն ձեռք բերվեց 2020 թվականի երկրորդ եռամսյակում Երևանում անցկացնել «Ռուսական տեխնոլոգիաները օպերատիվ քարտեզագրման մեջ» թեմայով դասընթաց՝ հայաստանյան մասնագետների մասնակցությամբ:

Միջպետական խորհրդի՝ հերթագայության կարգով նախագահումն այս նիստի ընթացքում անցավ Ղրղզստանին, համանախագահերն են Տաջիկստանը և Հայաստանը: Հաջորդ նիստը հրավիրված է 2020 թվականի աշնանը Բիշքեկում, իսկ 2021 թվականի խորհրդի նիստը տեղի կունենա Հայաստանի Հանրապետությունում: ԱՊՀ մասնակից պետությունների գեոդեզիայի, քարտեզագրության, կադաստրի և Երկրի հեռահար զոնդավորման միջպետական խորհրդի 41-րդ նիստի ավարտին ընդունված ամփոփիչ արձանագրությամբ մինչև հաջորդ նիստն ընկած ժամանակաշրջանը հռչակվեց «Հմտությունների փոխանակման և ռազմավարական պլանավորման տարի»:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները.

ԱՊՀ մասնակից պետությունների գեոդեզիայի, քարտեզագրության, կադաստրի և Երկրի հեռահար զոնդավորման միջպետական խորհրդի 41-րդ նիստի ընթացքում կատարված բոլոր առաջարկները կամրագրվեն համապատասխան արձանագրությամբ, որը կփոխանցվի բոլոր մասնակից պետություններին:

Կադաստրրի կոմիտեն կապահովի եզրափակիչ արձանագրությամբ ամրագրված պայմանավորվածությունների պատշաճ կատարումը, ակտիվորեն կներգրավվի աշխատանքային խմբերում իրականացվող աշխատանքներին:

10. Ստորագրությունը, ամսաթիվը:

Սարիաստ Պետրոսյան 23.09.2019 թ.